

մարդ յանձն առնեք ի ազմել լիակատար  
եւ մանրամասն ցուցակներ Հայոց ձե-  
ռագիրների եւ տպած գրքերի, որք  
կան Փարիզի, Աստրայի, Վիեննայի եւ  
այլ Եւրոպական քաղաքների, մատենա-  
գարանների մէջ։ Պէտք է ասել որ՝ Եւս  
բոսլայի մինչեւ անգամ փոքրիկ քա-  
ղաքների մէջ, ուր կան հասարակական  
մատենագարաններ, կան միշտ մի քանի  
չատ Հայոց ձեռագիր եւ տպած գրքեր։  
Ես լսեցի որ Հ. Պարմնեանը ահա քանի  
ուրի է կազմում է Աստրայի մատե-  
նագարանի Հայոց գրքերի ցուցակը։  
Եթէ այդ ցուցակը պիտի նմանի իւր Փա-  
րիզի ցուցակին, լուս կրինէր որ՝ իզուր  
չափատէր Հ. պատուականը։

Փարիզի մատենագարանում կան նոտ-  
եւ շատ առաջած Հայերէն գրքեր,  
բայց ինձ անկարելի եղաւ փոքրիշատէ  
միշտ գաղափար կազմել նոցա մասին։  
վասն զի նոցա վերնագիրները ըստ բո-  
վանգակութեան ցրուած են մատենա-  
գարանի ընդհանուր ցուցակի Հարիւ-  
րաւոր հաստ հատորների մէջ։

Վ. Ա. Բ.

Տ. 1. Յ. Հ. Հ. 1878 թ.

Ըստ Փարիզ մատենական առաջատար  
ուժի ու առաջատակ միջամտեան միջա-  
ծառք քառ-Շ թէ թէ մատենական մաս-  
նակ ու մատենական միջամտեան մա-  
տենակ ու հարաց սև բայր պատմակա-  
նակ մատենական միջամտեան մա-

## ՀԻՒՍՈՒԵՄ

ԹԵՂԻՑ ՆՐԵՄՆԻ ՊԵՏԱԿԱՐԱՅ ՀԵԶՈՅ

Պ. Ա. Տ Մ Ո Ւ Թ Ի Կ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԵԱՆ Խ Հ Ա Յ Ա

Եյս վերնազրով՝ անցեալ 1877 թը-  
ւականի վերջերում ի շնորհս և ծախսիք  
Մեծ. Պ. Ա. Սանապեանցի հրատա-  
րակուեցաւ Եղեքսանզրապօլեցի Երզոյ  
Կարապիս Յ. Առանեանցի շարահիւ-  
ած և երկը հատորէ բաղկացած մի երկա-  
սիրութիւն, որ ոչ միայն մեր հայկական  
զրականութեան մէջ իւր արժանաւոր տե-  
ղը ունի, այլև կրօնասիրութեան և հայ-  
կական ազգային զգացմանց եռանդը և աշ-  
խոյժը մանկուոյն սրտից և արեան մէջ տա-  
ծել բողբոքելոյ համար ընտիր և կարեւոր  
զասազիքը լինելոյ համապատշաճ յարմա-  
րութիւնը և արժանաւորութիւնը ունի։

Վարզպանութեան պատմութեան մէջ  
զիւաւոր նիւթն է և յաւակապէս ընդարձակ  
տեղ զրաւած է Վարզանանց պատերազմը  
և նահատակութիւնը, և Պ. Եշնատասի-  
րոյն ժամանակակից պատմազրաց և մա-  
տենազրաց խօսքերէն ընտիր և կարեւոր  
մասերը ծաղկաբաղերով և շարազասելով՝  
Հայոց մարզպանութեան ժամանակաց և  
անցից վերայ՝ իւրաքանչիւր պատմազրի  
առանձին առանձին հաղորդածէն աւելի  
ընդարձակ և ամիսոփ ուշազրութեամբ ըստ  
կարգին պատմութիւնը շարահիւսեր է, և  
զիւակեր առաջին հատորում, և միենոյն  
ժամանակի թէ, ժամանակակից պատմազրաց  
մէջ երեցած տարբերութեանց հետ պատ-  
մութեան մէջ կարեւոր և ուշազրութեան

արժանի տեղերը հետազոտելով՝ թէ առաջըքական—աշխարհադրական՝ թէ վիճակագրական՝ թէ ժամանակակից՝ և թէ անցեալ և այլ պետութեանց՝ կրօնից՝ զէնից՝ օրինաց՝ ծիսից՝ նախապաշարմանց և աւելորդապաշտութեանց համար՝ թէ ինքնին և թէ այլ ազգային՝ օտարազգի հմտութեամազիքներէն՝ մատենազրական քննութիւններէն և ձանապարհորդութիւններէն քաղելով՝ ընդարձակ և ընտիր պատմազրական՝ տեղազրական՝ վիճակազրական և ին ծանօթութեամբ՝ քննութեամբ և տեսութեամբ ճոխացուցած և ամփոփած է երրորդ հատորը, այնպէս որ յիշեալ աշխատասիրութեան առաջին և վերջին հատորները ամեն աստիճանի և կարգի ազգայնոց և օտարազգի մատենազրաց վերձանութեան՝ ուշազրութեան՝ հետազոտութեան միանգամայն աեսութեան արդարե արժանի և հետաքրքրական երկասիրութիւնք են, և եթէ առաջին հատորը միայն զրաբար լինելով՝ ընդհանրապէս ամենուն համար հասկանալի չլինի, երկրորդ հատորը կուիկ և պարզ աշխարհաբար լիզուով լինելով՝ ինչպէս նա և երրորդ հատորը՝ նորա հետ բաւական է ցանկացողաց յազուրդը լրացնելոյ և ամենուն առհասակ ախտարի ախորժելի և օգտաւէա լինելոյ համար:

**Երրորդ հատորի սկզբում՝ արդոյ Եշխատասիրողին յառաջաբանը ըստ բաւականին մանրամասնած է յիշեալ երկասիրութեան բուն նպատակը՝ կարեորութիւնը և այլ հանգամանքները, ուստի արժանի կհամարիմք ի ստորև նոյն յառաջաբանը ամբողջութեամբ հրատարակել, որպէս զի թէ աշխատասիրողին և թէ ցան-**

կացողաց զիւրին միջոց տուած լինիմք՝ առանց աւելորդաբանութեանց՝ յիշեալ Նշանածոյ վերայ աւելի լաւ և կարեոր զաղափարը ուղղակի քաղելոյ համար, և զրոց յարդը հետեւ իմացուի:

**Եհաւասիկ յառաջաբանը :**

\* Անկարենի է պատմութիւն հասկանալ առանց ծանօթ լինելու նորա իսկական աղբիւներին: Հականալ սասացինք, որովհետեւ պատմական իրողութիւնն իմանալ կարենի է նաև ամենայն մի դասագրքով: Բայց թէ ինչ կեանքի եւ ինչ պայմանների ծնունդ են այն իրողութիւնքը, այդ մեզ անհամառ նաև ամբողջ կամ մամանակակից պատմիների դրութեանը: Եւ այս՝ կրկին պատմառներով նախ որ գասափիրը մի կարող ամփոփել իր մէջ ամենայն մանրամասնութիւն: Իւ երկրորդ որ մենք շատ անշամ գտնուում ենք նոյն իսկ դասպիրը հեղինակողի մոքերի աղցեցութեան տակ:

\* Եթէ պատահի մեզ, զոր օրինակ, մի բացցը երդիցողութիւն լսել, մեր սրտի վերայ խորը տպաւուում է նորա ամրոջ ներդաշնակութիւնը: Նորա ամենայն մի ծայնը, ամեն մի դայլայիկը զրանուում է արծագանք մեր զգացմունքի մէջ: Բայց եթէ միւնչոյն երդիցողութիւնը մէկ ուրիշը լսած լինի եւ զայ մեզ պատմէ իւր տպաւորութիւնքը, անկասկած մեր սրտի վերայ այն տպաւորուելու ցէ, ինչոր անձամբ կարող էինք փորձել:

\* Այսպէս է եւ դասպիրը նշանակութիւնը պատմական աղբիւների վերաբերութեամբ: Պասափիրը տափս է մեզ տեղեկութիւն թէ այս ինչ բանն եղել է, եւ բացարում էլ է մասամբ թէ ինչ պատմառով է եղել: Բայց մենք մնում ենք դոյն իսկ բացատրութեան նեղ շրջանի մէջ, որովհետեւ հնար չունինք մի այլ եղբափակութիւն անկուտ: Խակ երբ աղբիւներին ենք դիմում, երբ մենք լսում ենք ականատեսի կամ ժամանակակցի պարզ եւ մանրամասն վէալը, մեր առաջը ընդարձակուում է մեր ենթագրութիւնների, նաև նոյն իսկ տեղեկութիւնների նորիդնը, եւ մենք ազատ ենք ամենայն մի իրողութիւն մեր խակ տեսութեամբ կշռաղաւելու:

\*Այսպէս ուրեմն անհրաժեշտ է պատմութեան աղբիւրներին ծանօթ լինել. առանց այդ ծանօթութեան մեջ գտուար է ճիշդ գաղափար ունենալ այս կամ այն իրողութեան մասին. առանց ալդ ծանօթութեան մենք չենք կարող հասկանալ մի իրողութեան ներքին կողմը:

Հայոց պատմութեան տեղական աղբիւրները<sup>\*)</sup> շատ շատ են եւ բազմատեսակ: Որքան եւ եռանդ լինի մարդուս մէջ՝ անմիջապէս ուսումնասիրելու այդ աղբիւրները, այնու ամենայնիւ հասարակաց համար դա մի անիրազործելի հարկ է. այդ վերապահուած է միմիան սակաւաթիւ մասնագէտների հմտութեանը: Անիրազործելի է նախ այն պատճառով, որ ամեն մարդ կարող չէ բոլոր նախնի պատմիչների գրուածները միանգամից իւր ծեռքի տակ ունենալու. եւ երկրորդ, որ գտուար է այն մեռով օգուտ քաղել այդ աղբիւրներից, ինչպէս որ նորա կան:

Ի՞նչպէս ծանօթանայ, օրինակի համար, մի զիւղական վարժապետ Հայոց պատմութեան աղբիւրներին. նա գգում է, որ իւր զիտցածը սակաւ է, կցկրտուր է, ցամար է. նա ուրախ է իւր զիտութեան թերին լրացնել մի կերպով. բայց բնչպէս. թերեւ նա զեւ չդիտէ թէ ինչ աղբիւրներ կան. եթէ նա զիտէ եւս, նա չունի այնքան պատրաստութիւն օգուտ քաղելու այդ աղբիւրներից: թէ նա մեռը է առնում կորենացու պատմութիւնը, նախ եւ յառաջ նա դունում է այնոնք մի խառնիխուռուն դաստործ, բաւականին զգուար իւղով գրած, երեմն նաեւ շատ օտար անձանօթ նիւթերով լցուած նկարագրութիւն: Նա մեծ եւանդով կարում է մի զրլութ, միւսը. կարծիս թէ հասկանում է եւ ոգեւորում է իւր հասկացածով. բայց նորա համար մութն են մոււմ մի բանի անցքերի յարաքերութիւնը, տեղը, ժամանակը. նա չունի մի առաջնորդ, որ մեկնէր նորա այդ անհասկանափ կողմերը, բաժանէր առասպեկտութիւնը իրականութիւնից եւայն. այդ նա մոււմ է յուսահատուած. է՛, ասում է, կորենացին խթին է. ու իմ խելքիս բանը չէ: Վեր է առնում

Եղիշէի պատմութիւնը. նէնց առաջին զլուխներից նա յափշտակում է սորա քեզը ու ներդաշնակ լիզուով, սորա վսեմ ու ողեւորիչ մաքերով. նա մուանում է, որ պատմութիւն է կարդում. նա կորչում է Եղիշէի նոխ եւ փառաւոր լիզուի հոսանքում: շատ տեղ նորա ուշադրութիւնը կննդրոնանում է ուների, դարձուածների, ողբերի, ներբողների կամ կրակոտ յանդիմանութիւնների վերայ. այսուղ պատմութիւնը նսեմանում է լիզուի ճարատրութեան եւ շրեղութեան ու զգացմութիւնների վանութեան առաջ. սա մի բանաստեղծութիւն է, ասում է մեր բանասէրը. սա մի արձակ շարական է, այլ ոչ պատմութիւն. ծալում է Եղիշէն: Առնում է մեռքը Փարավեցու պատմութիւնը. այսունուղ նա հանդիպում է արդարեւ մի պատմութեան. նա նկատում է, որ կարծես թէ մի պառաւ նստած իւր ցաւերն է պատմում միառմիրայց թեթեւ չէ նորա պատմածը. շատ տեղ չափազնց շատախօսութիւն է անում, պատմութեան նիւթին չիրաբերող զատողութիւններ, ածականներ, մրով բանիւ աւելի խօսք բանթէ պէտք էք. նա տրկար զոլով սորա խօսքերից էլ մի բան յօրինել կապել միւսների հետ' ասում է «Փարավեցին էլ այլ կերպ է ներկայացնում այս ինչ անցքը» եւ ծալում է:

Այսպէս է մինում եւ բոլոր միւս աղբիւրների հնտեւ այդ շատ բնական է, որովհետեւ ազբիւրները կշուելու եւ միմեանց հետ համաձայննեցնելու համար լոկ ընթերցողութիւնը բաւական չէ, հարկաւոր է նաեւ այլ ուսումնական պատրաստութիւններ ունենալ:

Վիեւնոյն ժամանակ պէտք է չմուանանք, որ Հայոց պատմութեան աղբիւրները կրկին նշանակութիւն ունին զիտութեան մէջ: Մէկ' որ նոքա բովանդակում են իրենց մէջ նախնական լիզու. ուրեմն հարկաւոր է ուսումնասիրել նոցա իրբեւ մի լիզուագիտական կամ մատենապրական միջոց: Մէկ էլ՝ որ նորա բովանդակում են իրենց մէջ ժամանակակից կամ հնագարեան կեանքի եւ անցքերի նկարագիրը. ուրեմն հարկաւոր է ուսումնասիրել նոցա իրբեւ իմկ-պատմութեան աղբիւր: Կոցա արդ երկու զերը սովորաբար իրարու հակառակ են. ինչնու, որովհետեւ եթէ մարզս, զորօրինակ, Եղիշէի զրութեան վերայ իրբեւ մի զեղեցիկ ճարտասանական զրուածի

(\*) Վեր խօսքը գրաւոր աղբիւրների վերայ է. անգեր աղբիւրների մասին խօսելու անձեռնհաս ենք տակաւին:

վերայ նայելու լինի, այն ժամանակ հարկաւորութիւն չըւնի բովանդակութեան վերայ ուշադրութին դարձնելու եւ փնտրելու նորա մէջ ժամանակադրական հետեւողութիւն, աշխարհագրական ճշդութիւն եւ դատողութեան որոշութիւն, այսուեղ ամենակարեւորը դորձի արուեստական կողմն է, այսինքն՝ քերականական ծեւերի ճշդութիւնը, դարձուածների փափկութիւնն եւ ազդուութիւնը, նախադասութեան կազմակերպութիւնն եւ առանձնութիւնը եւ նկարագրութեան շրեզութիւնը. այս ասերով մենք հեռու ենք այն մարդից թէ այս գէպրում բովանդակութիւնը նշանակութին չըւնի. բայց լեզու ուսումնասիրովի ուշադրութեան համար այդ բովանդակութիւնը երկրորդական բան ք:

Եռանամախ լինելով Հայոց պատմութեան ադրբիրների մշակութեանը՝ մենք յատկապէս նայել ենք նոցավերայ իրեւ իսկ - պատմագրական յիշատակարանի վերայ. որբան եւ ջանացել ենք լիզուի զեղեցկութեանը շվնասել, այնու ամենայնիւ այդ եղել է մէզ համար իրեւ երկրորդական դիտելիք. եւ այս ոչէ անարդ համարելով լեզուի նշանակութիւնը, այլ, ինչպէս վերեւը բացատրեցնի՛, պատմութեան էական կողմերին դիւրեաւ ծանօթացնելու դիտուն ունենալով:

Այժմ բացատրենք թէ ինչ է մեր նպատակը եւ ինչ նանապարհով ենք կամեցել համեմելու նարան:

Մեր նպատակն է դիւրութիւն ընծայել մեր հայրենակիցներին անմիջապէս մեռքի տակ ունենալու եւ ուսումնասիրելու Հայոց պատմութեան աղբյուները. այսպիսի մի նպատակ անիրազործելի պիտի մնար, եթէ ծգաէինք Հայոց ամենամին ժամանակներից ըսկել պատմութիւնն եւ համեմել մինչեւ վերջը. անիրազործելի այն սպասնառով, որ այդ բնաւ հումաստասիսն չէ մեր ոյժերին ըստ չափու կարողութեան եւ կարեւորութեան դիմելով այդ նպատակին, բաւական էր, որ մենք աշխատէինք գէթ այն դարերի աղբյուները նախապէս մշակելու, որոնք մեր կարծիքով աւելի մեծ նշանակութիւն են ունեցել Հայոց ազդային կեանքի դարդացման համար. Այսպիսի մի նպատակի համար ընարեցինք Հայոց Մարգանութեան ժամանակը: Բոլոր այն աեղական աղբյուները, որոնց մէջ կարելի էր տեղեկութիւն գտնել այդ ժամանակուսց մասին՝ հաւաքեցինք ի մի, համեմատեցինք նոցաւ մէջ եղած տեղեկութիւնները եւ ինչոր պատ-

մութեան համար կարեւորն էր՝ նոյնութեամբ քաղեցինք եւ հիւսեցինք իրար հետ կամ շարեցինք այնպէս, որ գոյացաւ նոյն ժամանակուայ նկարագիրն իրեւ մի պատմութիւն մի բերանից հազորդած: Կհարկէ պատահում էր բաց թողնել մեր պատմիչների նկարագրութիւններից կամ խորհրդածութիւններից այսպիսի հատուածներ, որոնք իրեւ նարտասանական օրինակներ գրուածքի գոհարներն են, կամ այնպիսի խօսքեր, որոնք մեր կարծիքով լոկ շատախօսութիւններ են. այս ատենը մեզ ներեցինք անելու միմիայն հաւատարիմ մնալով մեր վերեւը յայտնած մորերին՝ այն է՝ ուսումնասիրել նախնեաց գրուածներն իրեւ պատմագրական յիշատակորան, այլ ոչ իրեւ մատենագրական:

Մարգագանութեան ժամանակը մենք բաժանեցինք երկու մաս: Արշակունեաց Թագաւորութեան անկումից մինչեւ Վահան Մամիկոնեանի մարգագանութեան առաջին տարին (452—486) Հիւսուածքիս առաջին մասն է, իսկ Վահանից մինչեւ Արաբացւց արշաւանքը լինելու է երկրորդ մասն:

Առաջին մասի աղբյուները զիմաւորապէս Եղիշէի եւ Փարագեցու պատմութիւններն են, թէիւ ուր որ կարծիք էր, մենք օգուտ ենք քաղել Խորենացու, Սիրէոսի, Թովմայ Արծրունու և. այլ պատմիչների տուած տեղեկութիւններից եւս: Մեր ծնուքն եղած Եղիշէի պատմութիւնը 4828 Թուին, իսկ Փարագեցունը՝ 1793 Թուին Վենէտիկ տպած օրինակներն են: Առվիճակու բայր այս աղբյուները գրոց լեզուավեն գրուած, այդ պատմառով Հիւսուածքիս բնագիրն էլ դրաբար է:

Գրաբար հասկացողների տակաւաթիւ լինելը զիտենալով՝ մենք լաւ համարեցինք տալ նաեւ մի աշխարհաբար Թարգմանութիւն: Որովհետեւ այս Թարգմանութեան զիմաւոր նպատակներից մէկն էլ այն է, որ միջոց տրուի երկու բարբառների մէջ համեմատութիւն անելու, այդ պատմառով մեր արած Թարգմանութիւնը զիեթէ բառացի է. տեղանու միայն մըտքի պարզութեան կամ լիզուի դիւրութեան հումար պատութիւն տուած ենք մեզ:

Աւրոր լուսաբանութեան կարօտութիւն կար, կամ նաեւ ամփոփելու կարիք, այնանց աւելորդ չնամարեցինք համառօտ ծանօթութիւններ զնելու, նաեւ բացատրեցինք աշխարհագրական աեղերի որպիսու-

Թիմը կամ թէ բնչ յարաքերութիւն ունի մի իրողութիւն միւսի հետ: Այն աղքիւրները, որոնցից օգուտ ենք բազել ծանօթութիւնների համար, յիշուած են խրաբսնցւրն իւր տեղում:

Անցրերի ժամանակը որոշերու համար աւելացուցներ նաև երեք տեսակ աղքիւսակ՝ առաջինը ցոյց է տափս Հայոց պատմութեան դուզընթաց ժամանակադրութիւնը: որպանից կարելի է տեսնել թէ Սասանեան Թագաւորութեան սկզբից մինչեւ Պահան Պամիկոնեան ժրպիսի ժամանակակից Թագաւորներ եւ իշխաններ են նաև Հայաստանում: Պարսկաստանում եւ Յիւզանդիայում նաև որպիսի Կաթողիկոսներ եւ Երկրորդ աղքիւսակը ցոյց է տափս միմիայն Հայոց Թագաւորների եւ Կաթողիկոսների ժամանակադրութիւնը գանազան հայ պատմիչների ցուցումներով, եւ Երկրորդ աղքիւսակը ցոյց է տափս միմիայն Հայոց մարզպանների, կաթողիկոսների եւ նոցա օրով պատահած նշանառոր անցքերի ժամանակադրութիւնը: Թէ Հիւսուածքի Ա, եւ Բ, գրքերի եւ թէ նոյն իսկ Գ գրքի համար աւելի մեծ նշանակութիւն ունին Ա, եւ Գ աղքիւսակները:

Աշխարհագրական տեղերի մասին գէ՛թ մօտաւոր գաղափոր ունենալու համար պատրաստեցինք նաև պատմական բարտէղ, որը ներկայացնում է ամրազ Սասանեան պետութիւնն այն սահմաններով՝ ինչոք եղել է նս Ա, զարում եւ ամրազ Հայաստանը:

Քնազրի մէջ բերած հասուածներից գտա կարեւոր համարեցինք Գ-րդ գրքի մէջ անզաւորել ժամանակադրութիւնը պատառութեամբ եւ այն պատմիչների խօսքերը, որոնք Եվլէշին ու Փարացցոն ժամանակակից չեն եղել սակայն հաղորդել են մի քանի նետարքիր տեղեկութիւններ: որոնց մասին չի յիշուեմ նոցա գըրուածների մէջ Սյուլիսի տեղեկութիւնը ըլտահայանք հիւմ սեղ ամրողչի մէջ՝ աչքի առաջ ունենալով միքանի ժամանակադրական ներութիւնը, որոնց մասին տես Գ-րդ գրքի Ա, եւ պատմինը, ուր եւ յայնանել ենք մեր հայեացըր այդ անզեկութիւնների վկրայ:

Այս ամենը կատարելիս՝ համոզուած գրով, որ ուսումնասիրող հասարակութեանն այնու անենայիւ մի անձակ նիւթ ենք նույիրում, մենք կարեւոր գատակընք մի լուսաբանող ներածութիւննեւս գրել, որու նապատակն է պարզել և անփափել միբանի առաջ-

նորդող մոքելը, որոնց աղջեցութեան ներբոյ կատարուել է Հայաստանում այն ամենն ինչոր նկարագրած են Եղիշէն եւ Փարացցին: արդպիսի մի ներածութեամբ՝ եթէ ոչ լուսին՝ դէ՛թ մասամբ պարզուած կրինի ընթերցողների համար նաև այն, թէ Եր գարում ինչ ուղղութիւն: Եր Թագաւորութեան - Պատմեան - Պարսիկների եւ Յիւզանդեան - Յոյների բարաբականութեան մէջ\*):

Ափոփում ենք մեր խօսքը յայտնելով ընթերցողներին նետիւեալը: ճափու որ Հիւսուածքս այդ մէկ հրապարակութեամբ վերջանալու մէջ այլ դա մի կտոր է այն ամրողջ շարքից, որը մտադիր ենք զուխ ճաներու զոյն իսկ ծրագրով: ինչպէս բացատրեցինք, այդ ծրագրի մէջ մտնում են՝ ա) զրաբար բնադիրը, բ) աշխարհաբար Թարգմանութիւնը, գ) ծանօթութիւնը և այսին: դ) քարտէղ եւ է) լուսաբանող ներածութիւն: Երկրորդ որ Հիւսուածքս զասագիրը մէջ, այլ ծեռաւութիւն է: Երրորդ որ Հիւսուածքս նշանակուած է չափահամների համար, այլ ոչ մանուկների: Եւ չորրորդ որ Հիւսուածքս իրեւ ծեռնոտութիւն պիտի նպաստէ զիմաւրապէս պատմութեան ուսմանը որովհետեւ այստեղ անփոփուած են Հայոց մարզպանութեան մօտ վաթնամեայ պատմութեանը վերաբերեալ բոլոր մեզ յայտնի գրաւոր - տեղական աղբիքները: Գարոցներում այդ իսկ նպաստակին ծառայեցնելու եղանակը կախուած կը մինի նոյն իսկ տեղական վարժավաետների հմտութիւնից: նորա ունենալով իրենց ծեռքի տակ Հիւսուածքի բոլոր մասերի նիւթը՝ կարող են նորա վերայ ստեղծել զասատուութեան եղանակը: այդ կախուած կը մինի նոցա պատրաստութիւնից եւ մտաւոր կարգութիւնից: Այսու ամենայնին մենք մեր կազմից եւ գրող ենք մատնացոյց լինել գործադրութեան նետեւեալ կէտերի վերայ:

Ա) Այն գորոցներում, ուր աւելի ընդարձակ են աւանդում աղջային եւ կելեղեցական պատմութիւնը, Հիւսուածքի Ա, եւ Բ, գրքերը կարող են լինել իրեւ զասագիրը մարզպանների ժամանակուայ պատմութեան համար: Բ) Ամենայն աւել ամրողութիւնից միայն միկանի զուխ ընտրելով կարելի է ընթերցա-

(\*) թէ աշխարհագրական բարտէղի եւ թէ ներածութեան աւգուտբութիւնն առայժմ հետաձգուում է, (Ծ Հ.)

նութեամբ մասմաս ծանօթացնել դեռավարժ աշակերտներին Հայոց հին ժամանակուայ միքանի նշանաւոր անձերի եւ անցքերի հետ, զորուինակ' Վարդանանց պատերազմին, կանանց վիճակին, Վահան Մամիկոնեանին եւ այլն, զուխների բաժանումն եւ բովանդակութեան համառօտութիւնն աշխարհաբարի մէջ ոչ պակաս օգնում են այս նպասակին: Եւ Գ) աչքի առաջ ունենալով ույսինչ կամ ոյնինչ զլատիք, ծանօթութիւնների մէջ ամփոփուած տևղեկութիւնն, ները եւ ժամանակագրական աղիւսակները վարժապեսներին դժուար չէ զրաւոր աշխատութիւններ տալ աշակերտին այն մորով, որ միջոց տան նորան մասներու իւր ուսած նիւթի վերայ, քրբելու ուրիշ աղբիւններ եւ տեղեկութիւններ հանդիւ եւ այն այս կողմից վարժապետները մեծ օգուտ առած կը լինէին աշակերտին, եթէ ցոյց տային նետպեսէ եւ այն աղբիւնները, որոնցից կարելի է օգուտ բաշդել: Մենք մեր ծանօթութիւնների մէջ անդտեղ զիտութեամբ աշխատել ենք աւելի շատ բաների վերայ ու շաղրաւթիւն դարձնել եւ ամփոփիչ լինել, որպէսի վարժապետները միջոց ունենան իրենք առանձին առանձին մտածելու մեր հարթւանցի նկատողութիւնների վերայ եւ շարադրութեան նիւթ ստեղծելու կամ հարցեր դնելու աշակերտի նաւար: Այսպիսի շարադրութիւնների նպասակը պէտք է լինի՝ արթնութիւն մացնել աշակերտի մասնութեան մէջ, որպէսի նա հետջնեաէ կարողանայ ընդելանալ բննադատութեան մեւերին: վարժապետներից կախուած կը լինի այդ նանապարհով ներշնչել աշակերտի մէջ փորբ ինչ կատկածոտութիւն եւ նիւթազօտութեան սպի, որպէս զի նա կոյրպիւրայն հնաւատայ տմենայն մի տեղեկութեան: վարժապետներն այսպիսի շարադրութիւններով միայն կարող են առաջնորդել աշակերտին այնպիսի թեթեւ հարցերի մէջ՝ ուր համրակը կարող է կը աղաջառող լինել, այլ ոչ յափշտակուող, ուր նորան զժուար չի լինիր կը իւրամիկոս հանդիսանալ այս ինչ կամ այն ինչ վկայութեանն եւ այնին: Խօսք չկայ, որ այսպիսի շարադրութիւններով կարելի է վարժեցնել միմուան հասած աշակերտներին, օրինակի համար, Ներսիսեան պարոցի վերին դասարաններում:

Աւելորդ նոր համարում լիշել այստեղ եւ այն որ Հիւսուածի Ա զիրքը կարող է ծառայել դպրոցնե-

րումն իրեն նպաստ Հայոց լեզուի դասատուութեան-այ զրաբարի ուսման մէջ միջակ շնորհրատաթեանը ծանօթացներու համար նա յարմար է իւր նիւթի նետաբերքականութեամբ եւ ընտիր ու դիւրընակ ոճովը վիրուծութեան, Թարգմանութեան, շարադրութեան նիւթ տալու, Թելադրութեան համար եւ այն նա յարմար է իւր բազմատեսակ զուխներով որպնը առմնըն առանձին առանձին առածքին առած ինքնուրոյն հն իրենց բովանդակութեամբ ներհանակ կը իւրեան կաղմանութեամբ: Եւ թ զանազան մասնենազնների ոճի վերայ մի հարեւանցի նաշնկ տալու համար Հիւսուածի Ա, եւ Գ, զրբերը կարելի է զօրծ զնել իրեւ մի առծեռն ծաղկաբաղ: այստեղ վարժապետներին հեշտ կը լինի ու շաղրաւթեան դարձնել ոչ միայն լոկ քերականական ծեւերի տարրերութեան կամ բազմատեսակութեան վերայ, այլիւ նոյն խալ առանձին խօսքերին, այլափոխութեան (ներին կամ արտաքին), աղճատման եւ այլ կողմերի վերայ: աւելի ու շաղրաւթեան արժանի են այդ գէպառում իւրաբանչիւր մատենագրի զօրծ զրած հազուազիւր խօսքերը: այստեղ վարժապետի առաջնորդութեամբ աշակերտը պիտի նեւերի գտնադանել բատի օսաք կամ հարազատ մնելը, այժմ հնացած կամ սործածական մնելն եւալին, նմանապէս պիտի արթաւն լինի տեսնելու թէ որ հազարպիւտ խօսքը որ մատենազրի զրցի առակ բնչ մորով է զօրծ զրուել\*):

(\*) Զորօքինակ Եղիշէն միքանի խօսքեն այնպէս է զործ գրել, ինչպէս որ այժմ մարդ եղիք գործ ածաւմը ուր: 32 տառմ է, ո գունդ կադմէին, որ գնասա շօթակ արացեն ու եր: 315 տառմ է, ո թիկամըն հետ զձեւուն ի վայր ընկեց ու եր: 355 տառմ է, ո քայլու ի տեղի այսր ինձ դաբթեալ գալ պիտի ու եր: 245 տառմ է, ո գորոր ակրու (պարագերը) հարկաց աշխարհի ու եր: 266 ո մնայոք ո խօսքը զործ է դրեւ ու սպասում էինք ու բառի մաքով, ինչպէս այժմ էլ միքանի գուտառեկաններում տառմ են ո մնամը էինք ու եր: 123 զործ է դրեւ ո ցանել ո բայրը որ սպասմ ու կերմանելն է, բայց էլ զորու ընափը դոր-ծածութիւն է, եր: 252 տառմ է, ո եւ զօրհամա-պաղ զնուաց յակաց հանեին ու, այժմ էլ մենք, բայց ոչ երք ու ըստի մատենազրներն, այս ոճը դործ ենք ածում հաւաքակ խօսակցութեան մէջ ու աչքեց հա-նել, աչքեց ձգել, աչքեց ելնել ու այլն եղիշէն

Մեր այս համառօտ խօսքը վերջացնելիս սեպուհ պարտաւորութիւն ենք համարում յայտնել մեր ընթերցղներին, որ այս մեր աշխատութիւնն իւր աշխարհ գալովը պարտական է Մեծապատիւ Մկրտիչ Պարզուան Պ. Անաստարեանցին, որն ազգասիրարար բարեհամեցաւ իւր վերոյ առնել չիւսուածքիս տպակրութեան ծափքը: Չուղիով վիրաւորել մեր մեծապատիւ բարերարի համեստութեան դգացմունքը՝ փոխանակ մեծամեծ դովեստներ շռայլելու, որոնց նաև բազմօք արժանի է, մենք բաւականանում ենք միայն հրապարակաւ յայտնելով նորան մեր խորին չնորհակալութիւնը: . . . \*

**Ենշուշտ ուշադիր ընթերցողն վերև**  
Հրատարակեալ յառաջարանէն ինքնին  
կարողացաւ ըստ բաւականին տեղեկանալ  
**Ճ-սո-ս-ժ-ո-ց** արժէքին և կարեորութեան,  
և այս առթիւ մեք ևս պէտք է յաւելումք,  
զի շատ փափաքելի է և մեծ ծառայութիւն կնուիրուի ոչ միայն հայկական դրականութեան, այլ մանաւանդ **Ճ-ա-յ-**  
յոց **Վ-զ-զ-ի** և **Ե-կ-ե-ղ-ե-ց-ո-յ** միանդամայն, եթէ  
**Ճ-ս-ս-ս-ժ-ո-ց** նման հանդերձ ծանօթութեամք և ընդարձակ տեսութեամք՝ ժամանակակից և այլ պատմազիրներէն հատընտիր և ուշադրութեամք ծաղկաքելով  
և շարահիւսելով ամփոփուի **Ճ-ա-յ-** ամբողջ պատմութիւնը, որ **Ճ-է-և** Մարգարանութեան ժամանակաց հետ համեմատե-

**լով՝** պատմական կարեոր աղբիւրներուն շատ պակաս և կիսատ - պրատ լինելով՝ խիստ շատ աւելի դժուարութեանց կհանդիպի, բայց դարձեալ որքան որ կարելի լինի և շաբահիւսուի **Պ.** Կոստանեանցի նման ուշազիր և հետաքրքիր երկասիրաց ջանիւք և հետազոտութեամքը՝ խիստ շատ օգտաւետ է և պիտի լինի, և բարոյական տեսութիւնքը մանաւանդ հրահանգիւ բարի ազդեցութեամբ գոնէ **Ճ-ա-յ-** ապագայ սերնդեան ոգւոյն՝ զգացմանց և ջանից բարենախանձ թելազիր լինել կարող են:

**Ճ-ը-դ-ա-յ-** և **մ-ի-ք-** որ այս իդաք շուտով կիրագործուի, և հրատարակեալ **Ճ-ս-ս-ս-ժ-ո-ց** նման ողջամիտ անձանց ընդունելութեան և համակրութեան կարժանանայ, մանաւանդ թէ, այս նպատակը արդիւնաւորելոյ համար այժմէն մի գեղեցիկ խրախոյս և գրգիռ անշո՛ւշտ պէտք է, տալ **Ճ-ս-ս-ս-ժ-ո-ց** աշխատասիրողին՝ ներկելով մինչև անդամ եթէ պակասութիւնք երեխն՝ (ինչպէս որ հրատարակուածին ծանօթութեանց մշջ ճ-+անէ լիւլւ սիսալներ կամ պատմական և տեղազրական անձընութիւնք կան, որոց վերայ առանձին խօսելոյ առիթ պիտի ունենամք՝ եթէ միջոցներս ներեն), և չէ կարելի երբէք յուսալ ևս՝ զի այսպիսի աշխատութիւնք իսպատսպուռ թերութիւններէ և սիսալներէ պատա լինին, և երբեմն պատմական հին տեղեկութեանց չափազանց պակասութիւնքը և գտնուածներուն հակասութիւնքը բաւական են աշխատասիրողները ոչ միայն շուարեցնելոյ, այլ և այն անձանց սիսալ ըմբռնմանց կամ հակատակ ծաշակին և հակակարծիք գաղափարին ևս հանգիպելով՝ չեն կարող առհասարակ ա-

ունի եւ մի քանի օտար խօսքեր, սրբնք այժմ եւս գործածական են, զոր օրինակ՝ աման (79), գեղան (243), գեան (108), աշկարայ (37), տշեռար (251), կարստան (քարվան), օտար են եւ պատկանդարներ (կառարձ, եր. 12.), մարզ (106), փռքսիւ (240, 281)։ Դայցար, պայտարիւ եւ այլն սոց նման խօսքերը արդի գործածական խօսքերից են՝ թիւ, երդ (երգիր), տաճիք, տաճդուղք, եւ այլն եզրէն գործէ դնուամ եւ մի քանի խօսքեր, որոնց նշանակութիւնը մոքով է համարցուամ, բայց ճշդիւ յայտնի չէ, զոր օրինակ, առառում, գարիրիր, երածիկ, արտրաւել, ուժացուցանել եւ այլն:

մենուն ախորժելի և հաւանելի երեխը  
կամ որպիսի և իցէ դժգոհութեանց ա-  
ռիթմներ չտալ ։ Կայց և այնպէս՝ Պ. Աս-  
տանեանցի շարահիւսուածքը բարերազ-  
դաբար կընայ անշուշտ առենուն առ հա-  
սարակ հաճելի և ախորժելի ներկայանալ,  
մանաւանդ թէ նորա ընտրած նիւթը և  
ժամանակը այնքան ընտիր՝ բարենպատակ  
և օգտաւէտ է՝ որ Արագնեայ մանկախն  
ազգային և կրօնասիրական վսեմ և նուի-  
րական զգացմանց մէջ կրթելոյ և վառելոյ  
համար՝ պէտք է զարգացած ուսանողաց  
ձեռքը տալ զայն իրրե կարեոր և ընտիր  
գասազիք, որ միանդամայն մատենազբա-  
կան կրթութեանց և կրկնատեսակ թարգ-  
մանութեանց կրնայ զիւրութեամբ ծառա-  
յել, և կյուսամք որ ուսուցիչք փոքձով  
աւելի լաւ կհասկանան և կհամոզուին:

Մ.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲՈՂՈՔ ՊԱՆԴԱՏԻՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Քեզ ասեմ, ով անողորմ զու թէնքան,

Մեր հնդ Հայերն ինչ յուսով առ քեզ կդան.  
Քեղնից բարիք չի յուսար Պարսիկն անզամ,

Դու Թափեցիր նորանց սրբոց ումբն արեան:  
Չունիս Հայոց մի սրբավայր պաշտեթ,

Ինչնվ եղար նորանց այդքան սիրելի:  
Նախորդների վիճակն ոչ յիշեցին,

Ուրախ սրտով, մեծ յուսով առ քեզ եկին:  
Առաջ ցոյց տաս աշխատանք՝ շատ դրամներ,

Վերջն նորանց դու կանես ովինչի տէր:  
Մարդիկ բեռնով ըշտապելով քեզ կդան,

Լաւ ծափելով լոկ մուրհակներ կստանան:  
Պահեն պինդ պինդ ծալած թղթեր մեծ հաշւոց,

Նոցա յուսով զոհեն զումար դրամոց:

Այսօր վայն անցանին թամանակներ,

Եւ մեռն ունայն քանդուի իւրեանց տուներ:  
Նորանց զործն եղեր է, միշտ հառաջանիր,

Դատարկ շրջիւ զնը անցնին անպէտ կեանը:  
Անձար « Ասուուած ողորմած է » միշտ ասեն,

Եւ ի վերջոյ սեւ նողիդ բաժին լինեն:

Հայոց արեան համար զու շատ ծարաւ ես,

Առանց մայնի մին մին նոցա կլանես:

Ցանկարծ թէնքանն ուռած սրտէն փրղմքեց.

« Կնշէ տասւ զիս անարգես, բանատենդ:  
Ես չեմ ասեր, քեզմէ հարցնեմ մին առ մին,

Դու տեղեակ ես քո Ազգիդ աբածներին:

Ես նորանցն սուած եմ առատօրէն,

Ինչի պէտք է ինմէտ միշտ անզոր լինեն:

Նորա իւրեանց ճանապարհն թէ ուղեն,

Ամենեւին նեղութիւններ չի կրեն:

Լաւ աշխատանք եւ յաջող օր սուեցի:

Շատ փողերով առուտուրով ծաղկեցրի:

Գլխաւորին տեսար ինչն արեցին,

Զար նախանձով բանի տուներ քանդեցին:

Քանի իւրեանց զործերն աստ բարի էր,

Պարզեւում էր Տէրն յաջող լաւ օրերը:

Հարսաւացան եղան ամեն փողի տէր,

Հայարաւացան ստացան չար ողիններ:

Թշնամութեամբ Պարսից ինչն պատմեցին:

Իւրեանց դործի զադանիքն ամեն յայտնեցին:

Առ եւ տուրի ծեւերն Պարսիկ իմացին,

Զգուշութեամբ նորանց մեռքէն խեցին:

Ինչ խայտառակ բաներ նորա չարեցին,

Կնքոն իրար մեծ մեծ վնաս տվեցին:

Նորանց յաջող շրեն օրն տեսած են.

Հիմայ ինչ խեղմ դրութեան մէջ են, դու տես:

Արևնաստակից քո ընկերն լաւ զիտէ,

Նորանց մինչեւ անզամ մեռքն իմ իմայեր է:

Գոհարենիքներն ամեն Պարսից արքային,

Որ կարօտ են Հայոց այդ մեծ արմեստին,

Նորերն որ այդ արմեստի մէջ ծաղկեր են,

Իւրեանց մեծի պատուէրներին հնագանի են:

Անկարդ բանի հետեւանքն անկարգ է,

Նորա համար երեք օգուտ ցրերի:

Կան ծեղանէ ոմանք զինի վաճառեն,

Արդեօր նորա իւրեանց դործէն չամաշն: